ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների), Մեղրի համայնքի սեփականություն համարվող գույքի օգտագործման տրամադրման ու օտարման կազմակերպման և անցկացման հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ընդհանուր աճուրդ (4 **լոտ)՝ բաց եղանակով**:

Գյուղատնտեսական հողերից՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու համար

Լոտ 1. Մեղրի **համայնք քաղաք Մեղրի** 0,23762 հա հողամաս, ծածկագիր՝ 09-005-0751-0037 մեկնարկային գինը –475 000 դրամ

Լոտ 2. Մեղրի համայնք քաղաք Մեղրի 0,20253 հա հողամաս, ծածկագիր՝ 09-005-0507-0025 մեկնարկային գինը –410 000 դրամ

Լոտ 3. Մեղրի համայնք գյուղ Վարդանիձոր 2,36075 հա հողամաս, ծածկագիր՝ 09-092-0426-0033 մեկնարկային գինը –2 360 000 դրամ

Լոտ 4. Մեղրի համայնք քաղաք Մեղրի 0,06458 հա հողամաս, ծածկագիր՝ 09-005-0734-0015 մեկնարկային գինը – 410 000 դրամ

Աճուրդը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 07-ին ժամը 11:00-ին Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Զ. Անդրանիկ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող Մեղրիի համայնքապետարանի վարչական շենքում:

Հողամասերում ճանապարհներ, ջրատար, կոյուղի, էլեկտրահաղորդման գծեր, գազատար առկա չեն: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ, սերվիտուտներ չկան:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ ներկայացնելով հայտ, աճուրդի մասնակցության համար սահմանված 10000 ՀՀ դրամի չափով վճարի անդորրագիր (որը պետք է վճարեն Մեղրի համայնքի բյուջե՝ 900305081433 հաշվեհամարին), անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթեր: Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին, հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում են աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ : Աճուրդի կազմակերպման փաթեթում առկա են աճուրդի կազմակերպման և անցկացման կանոնակարգը, ճարտարապետահատակագծային առաջադրանքն ու պայմանագրի նախագծերը: Ցանկացողները աճուրդի փաթեթին կարող են ծանոթանալ Մեղրիի համայնքապետարանում, իսկ պատճենի տրամադրման դեպքում պետք է Մեղրի համայնքի բյուջե վճարեն 3000 դրամ: Լոտ (լոտերը) կարող են ուսումնասիրել աշխատանքային օրերին, ժամը 10.00-ից մինչև 18.00, Մեղրի քաղաքում՝ 48 ժամ ընդհանուր ժամաքանակով: Մասնակիցները աճուրդի անցկացման օրը վճարում է նախավճար լոտի արժեքի 50 տոկոսի չափով: Աճուրդում հաղթող է համարվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Սյունիքի մարզի Մեղրիիի համայնքապետարանի աճուրդային և մրցութային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթ.

ԼՈՏ 1 - Ծածկագիր 09-002-0064–0118 Մեղրի համայնքի Ագարակ Սահմանամերձ փողոց 12/4 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության պահեստարանների հողեր գործառնական նշանակության 0,0433 հա հողամաս /կառուցապատման տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին 30% ոչ հիմնական շինություն՝ տաղավար տեղադրելու նպատակով: Իրականացվող ծրագրի ժամկետը 10 տարի: Մեկնարկային տարեկան վարձավճար սահմանելով 600 000 դրամ:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 07-ին ժամը 10:00-ին Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Զ. Անդրանիկ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող Մեղրիի համայնքապետարանի վարչական շենքում:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել. ա/հայտ, բ/ մրցույթին մասնակցության համար սահմանված 10000 դրամի չափով վճարի անդորրագիր(որը պետք է վճարեն Մեղրի համայնքի բյուջե՝ 900305081433 հաշվեհամարին), գ/անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը: Մրցույթի անցկացման օրը մասնակիցների կողմից վճարվում է նախավճար լոտի արժեքի 5%-ի չափով: Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում են մրցույթի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ:

Մրցութային քայլը կազմում է հողամասի մեկնարկային գնի 5%–ի չափով: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը համարվում է մրցույթում հաղթած մասնակից, որը արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտի մեկ տարվա վարձավճարը միանվագ: Հողամասի նկատմաբ սահմանափակումներ՝ սերվիտուտեր չկան:

Մրցույթի կանոնակարգին և կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրման լոտին մասնակիցները կարող են ծանոթանալ մինչև մրցույթի բացման նախորդ օրը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-17:00 ընկած ժամանակահատվածում /բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածը/:

Սյունիքի մարզի Մեղրի համայնքապետարանի աճուրդային և մրցութային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասերի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթ.

ԼՈՏ 1 - Ծածկագիր 09-005-0706-0056 Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի 0,16689 հա հողամաս, գյուղատնտեսությամբ զբաղվելու նպատակով՝ 25 /քսանհինգ/ տարի ժամկետով մեկնարկային տարեկան վարձավճար սահմանելով 5500 դրամ:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 07-ին ժամը 10:00-ին Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Զ. Անդրանիկ փողոցի թիվ 2 հասցեում գտնվող Մեղրիի համայնքապետարանի վարչական շենքում:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել. ա/հայտ, բ/ մրցույթին մասնակցության համար սահմանված 10000 դրամի չափով վճարի անդորրագիր(որը պետք է վճարեն Մեղրի համայնքի բյուջե՝ 900305081433 հաշվեհամարին), գ/անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը: Մրցույթի անցկացման օրը մասնակիցների կողմից վճարվում է նախավճար լոտի արժեքի 5%-ի չափով: Հայտերի ընդունումը

և մասնակիցների գրանցումը դադարեցվում են մրցույթի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ: Մասնակիցները հայտի հետ կարող են ներկայացնել լրացուցիչ պարտավորություններ ստանձնելու վերաբերյալ տվյալներ՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համառոտ ծրագիր /ոռոգման համակարգի անցկացում, հողամասի բարելավման ուղղված գործառույթներ, նոր աշխատատեղերի ստեղծում և այլն/, սոցիալական /բարեգործական/ բաղադրիչի առկայություն, որոնք համապատասխան գնահատման մեթոդով հաշվի են առնվելու հանձնաժողովի կողմից մրցույթում հաղթող ճանաչելու համար: Մրցույթում հաղթելու դեպքում ներկայացված պարտավորությունները նեռարվելու են կնքվելիք հողամասի վարձակալության իրավունքով տրամադրման պայմանագրում:

Հաղթած մասնակիցը արձանագրությունը ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտի մեկ տարվա վարձավճարը միանվագ: Մրցույթում հաղթող անձը պարտավոր է վարձակալվող հողամասը օգտագործել համաձայն ագրոտեխնիկական պահանջների և իրականացնել սահմանված բնապահպանական միջոցառումներ՝ հողամասի օգտագործման միջոցների և դրանց այն մասի արգելումը, որոնք հանգեցնում են հողի որակի ու բերրիության անկմանը կամ շրջակա բնական միջավայրի վատթարացմանը:

Մրցութային քայլը կազմում է հողամասի մեկնարկային գնի 5%–ի չափով: Հողամասերի նկատմաբ սահմանափակումներ՝ սերվիտուտեր չկան:

Հողամասը երեք տարվա ընթացքում նպատակային նշանակությամբ չօգտագործելու դեպքում հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը դադարում է:

Մրցույթի կանոնակարգին և վարձակալութան իրավունքով օգտագործման տրամադրման լոտին մասնակիցները կարող են ծանոթանալ մինչև մրցույթի բացման նախորդ օրը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-17:00 ընկած ժամանակահատվածում /բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածը/:

Տեղեկությունների համար դիմել Մեղրի համայնքի աճուրդային և մրցութային հանձնաժողով, հեռախոս +374 28643500:

Մեղրի համայնքի աճուրդային և մրցութային հանձնաժողով:

Տեղեկությունների համար դիմել Մեղրի համայնքի աճուրդային և մրցութային հանձնաժողով, հեռախոս +374 28643500:

Մեղրի համայնքի աճուրդային և մրցութային հանձնաժողով: